

ՀՀ Արարատի մարզում 2014 թվականի «Լույս հայի աչքերին»
ծրագրով իրականացված աշխատանքների մասին տեղեկատվություն

ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կազմակերպչական աշխատանքի և «Լույս հայի աչքերին» բարեգործական ծրագրի աշխատակազմի ազգանվեր ջանքերի շնորհիվ «Լույս հայի աչքերին» բարեգործական ծրագիրը 2014 թվականի փետրվար - մայիս ամիսների ընթացքում ՀՀ Արարատի մարզի բոլոր բնակավայրերից իրականացրել է այցելուների ընդունելություն, խորհրդատվություն և հիվանդների բուժում: Արդյունքում հետազոտվել են 4754 քաղաքացի, վիրահատվել՝ 285 հիվանդներ: